Իրավ. հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Զավարյան 57/4

29 հունվարի, 2024 թվական

ՀՐԱՄԱՆ ԹԻՎ 29/01/2024-Լ

Ղեկավարվելով Ընկերության կանոնադրության 7.13 և 7.14 կետերով, Ընկերության և իր հաճախորդների/բաժանորդների միջև փոխշահավետ հարաբերություններ ապահովելու և Ընկերության ծառայությունների փոխշահավետ պայմաններով օգտագործմանը անձանց ներգրավվածությունն ընդլայնելու նպատակով՝

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ

1. Հաստատել «ԲԵՐ ԸՆԿԵՐՈՋԴ» ակցիայի պայմանները՝ համաձայն սույն հրամանի:

2. ԱԿՑԻԱՅԻ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1. **Ակցիայի անվանում՝ «ԲԵՐ ԸՆԿԵՐՈՋԴ»**

2.2. **Ակցիայի իրականացման ժամանակահատված՝** 01.02.2024թ. (մեկնարկի օր) - 10.03.2024թ. (ավարտի օր):

2.3. **Ակցիայի ենթակա ծառայություններ՝** Ընկերության կողմից ցանկացած սակագնով մատուցվող հեռուստատեսային և ինտերնետ ծառայություններ:

2.4. **Ակցիայի նկարագրություն՝** Ակցիայի ժամանակահատվածում Ակցիայի ենթակա ծառայությունից/ծառայություններից օգտվող բաժանորդի (**այսուհետ՝ «Գործող բաժանորդ»**) միջոցով վերը նշված ծառայությունից /ծառայություններից օգտվող նոր բաժանորդ (**այսուհետ՝ «Նոր բաժանորդ»**) ներգրավվելու դեպքում Նոր բաժանորդի և Ընկերության միջև համապատասխան ծառայության/ ծառայությունների վճարովի մատուցման պայմանագիրը կնքվելու պահից սկսած 6 (վեց) ամսվա ընթացքում Նոր Բաժանորդը և Գործող բաժանորդը Ընկերության հետ կնքված պայմանագրերի հիման վրա մատուցվող ծառայությունից/ծառայություններից օգտվելու են 50 (հիսուն) տոկոս զեղչով:

2.5. **Ակցիայի կիրառումը պայմանավորող պայմաններ:**

2.5.1. Սույն հրամանի 2.4.-րդ կետով նկարագրված Գործող բաժանորդի միջոցով Նոր բաժանորդի ներգրավվումը համարվում է կայացած/իրականացված Ակցիայի ժամանակահատվածում Նոր Բաժանորդի և Ընկերության միջև Ակցիայի

ենթակա ծառայության/ծառայությունների վճարովի մատուցման պայմանագիրը սահմանված կարգով կնքվելու պահից:

2.5.2. «Ակցիայի պայմաններ»-ը տարածվում են նաև այն Գործող բաժանորդների նկատմամբ, որոնք Ակցիայի ժամանակահատվածում սահմանված կարգով վերակնքել են Ընկերության հետ կնքված Ակցիայի ենթակա ծառայության/ծառայությունների վճարովի մատուցման պայմանագիրը:

3. Հանձնարարել Ընկերության մարքեթինգի բաժնին սույն հրամանը ուժի մեջ մտնելու պահից մեկօրյա ժամկետում «Ակցիայի պայմաններ»-ը տեղադրել Ընկերության պաշտոնական կայքում (www.fnet.am):

4. Սույն հրամանը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Գլխավոր տնօրեն՝ **Գևորգ Ենգիբարյան**

«ԷՖ ՆԵԹ» ՍՊԸ
«F NET» LLC
00868357